

«Բանկային գործունեության կազմակերպում» մագիստրոսական ծրագիր

Ընդհանուր տեղեկություն

ԿԳՄՍ նախարարության կողմից արդեն լիցենզավորվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բանկային գործունեության կազմակերպում» մագիստրոսական նոր կրթական ծրագիրը, որի կոնցեպտուալ փոփոխություններից է այն, որ ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով միջազգային առաջավոր փորձը և ՀՀ առևտրային բանկերի կողմից ներկայացված առաջարկությունները: Փոփոխությունների շարքում է ծրագրի տևողությունը, այն նախկին 2 տարվա փոխարեն լինելու է 1.5 տարի, դասապրոցեսը նախատեսվում է իրականացնել շաբաթական երեք անգամ, երեկոյան ժամը 18:15-ին: Դասապրոցեսը կազմակերպվելու է մոդուլային սկզբունքով և որոշ մոդուլներից հետո մագիստրոսը պետք այցելի բանկ, իրականացնի հետազոտություն և պաշտպանի այն: Դասավանդման ընթացքում առավելապես կարևորվելու են ուսանողի հմտություններն ու կարողությունները, որոնք միտված են լինելու աշխատաշուկայի պահանջների բավարարմանը:

Փաստենք, որ դասավանդումն իրականացվելու է բացառապես ուսանողակենտրոն սկզբունքով, որտեղ կիրառվելու են այնպիսի ուսումնառության մեթոդներ, ինչպիսիք են բանավեճը (debate), ուղեղային գրոհները (Brainstorm), օրինակների հիման վրա դասավանդումը (Case study) և այլն:

Կարևոր է նաև նշել, որ դասավանդողները ՀՀ առևտրային բանկերի ղեկավար կազմից են, ովքեր ունեն ոչ միայն մասնագիտական կարողություններ, այլև՝ մանկավարժական հմտություններ:

Ուսման վճարը մեկ տարվա համար 700.000 ՀՀ դրամ է, ամբողջ ծրագրի տևողության արժեքը՝ 1 մլն. 50 հազ. ՀՀ դրամ:

Մասնագիտության նկարագիրը

Այսօր Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայի ակտիվների շուրջ 94.2%-ը բաժին է ընկնում ֆինանսավարկային կազմակերպություններին, ինչը վկայում է դրանց առանցքային դերակատարության մասին: Փաստենք, որ ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում 2019 թվականին առկա է եղել 14700 աշխատակից, որից միայն 12000-ը բանկային համակարգում: Ֆինանսական և ապահովագրության ոլորտում միջին աշխատավարձը կազմում է շուրջ 470.000 ՀՀ դրամ:

«Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտության նպատակներից են՝ պատրաստել անհրաժեշտ վերջնարդյունքներով օժտված բարձրակարգ մասնագետներ, ովքեր ունակ են իրականացնել մասնագիտական

գործունեություն ֆինանսավարկային կազմակերպությունների ֆինանսական, տնտեսական և կառավարչական գործունեության ոլորտում, ներկայացնել և մշակել ժամանակակից բանկային պրոդուկտներ, ունենալ գիտելիքներ ժամանակակից պայմաններում առևտրային բանկերի կողմից միջոցների ներգրավման և դրանց բաշխման, բանկային գործառնությունների կիրառման, բանկերի շահույթի ձևավորման և բաշխման առանձնահատկությունների, բանկերի իրացվելիության հիմնադրույթների մասին, ինչպես նաև ՀՀ-ում ֆինանսավարկային մեխանիզմների կատարելագործման նպատակով կիրառել միջազգային առաջավոր փորձը:

Շրջանավարտները կարող են զբաղեցնել տարբեր պաշտոններ տեղական և օտարերկրյա ֆինանսավարկային կազմակերպություններում: Հատկանշական է, որ մասնագիտական կրթության ստացումը իրականացվում է այնպիսի սկզբունքով, որի արդյունքում ուսանողը կարող է աշխատել ոչ միայն ՀՀ ֆինանսավարկային համակարգում, այլ նաև տարբեր երկրների նմանատիպ կազմակերպություններում՝ սերտելով միայն տվյալ երկրի օրենսդրությունը:

Շրջանավարտները, համապատասխան վերջնարդյունքներ ստանալով, որպես ղեկավար կազմ կարող են աշխատանքի անցնել հետևյալ կազմակերպություններում.

- Միջազգային ֆինանսավարկային կառույցներ (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Ասիական զարգացման բանկ, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ և այլն)
- Կենտրոնականբանկ
- Առևտրայինբանկեր
- Վարկայինկազմակերպություններ
- Այլֆինանսավարկայինինստիտուտներ

«Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտության դասախոսների կազմում կլինեն «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի, Արդշինբանկ» ՓԲԸ-ի, «Ipoteka-Bank»-ի, «Ագրոլիզինգ լիզինգային վարկային կազմակերպություն» ՍՊԸ-ի, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի ղեկավար կազմի ներկայացուցիչներ: